ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » 2018 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-270-19.02.2018-ՊԱ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 247 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-270-19.02.2018-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվող կարգավորումներն անհրաժեշտ ենք համարում դիտարկել համակարգային կապի մեջ ինչպես վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) և ճանապարհային երթևեկության անվտանգության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այնպես էլ վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծի դրույթների հետ: Ընդ որում, նախագծային դրույթների գնահատման համար հիմք են հանդիսացել նաև դրանց համար ներկայացված հիմնավորումները:

1. Նախագծի 1-ին հոդվածի՝

1) «ա» կետով առաջարկվում է փոփոխել օրենսգրքի 123.5-րդ հոդվածի 2-րդ մասը՝ սահմանելով, որ տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը սահմանված տեղում չփակցնելն առաջացնում է վարչական պատասխանատվություն, «եթե դա պայմանավորված չէ տվյալ պահին անհաղթահարելի հանգամանքներով»: Առաջարկվող փոփոխության, ինչպես նաև դրա առնչությամբ նախագծին կից ներկայացված հիմնավորման մեջ ներկայացված դիտարկման վերաբերյալ հարկ է նշել, որ գործող օրենսդրական կարգավորումների պայմաններում ևս անհաղթահարելի ուժի պարագայում իրավախախտում կատարելը չի առաջացնում վարչական պատասխանատվություն, քանի որ պատասխանատվության վրա հասնելն օրենսդիրը պայմանավորել է մեղքի առկայությամբ՝ օրենսգրքի 9-րդ հոդվածում սահմանելով, որ *«Վարչական իրավախախտում է համարվում (...)* ***մեղավոր*** *(դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:»*:

Այլ կերպ ասած, վարչական պատասխանատվություն առաջանալու համար անհրաժեշտ պայման է այն, որ անձը գիտակցել է իր արարքի հակաօրինականությունը կամ թեև չի գիտակցել, բայց կարող էր գիտակցել իր արարքի հակաօրինականությունը կամ

ղեկավարել այն: Անձի մեղավորությանը վերագրվող նշված պայմաններն առկա չեն անհաղթահարելի ուժի պայմաններում, երբ արարքը կատարվում է անձի կամքից անկախ:

Հարկ է նշել, որ թեև օրենսգիրքը, որպես վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանք, ուղղակիորեն չի նախատեսել անհաղթահարելի ուժը, այնուամենայնիվ, օրենսգրքի մի շարք կարգավորումների համակարգային վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ անհաղթահարելի ուժի պայմաններում վարչական իրավախախտում կատարելը, երբ առկա չէ անձի մեղավորությունը, չի առաջացնում վարչական պատասխանատվություն:

Միաժամանակ, վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծն այս առումով հստակություն է մտցրել՝ անհաղթահարելի ուժը դիտարկելով որպես վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանք.

2) «բ» կետով առաջարկվող փոփոխության, դրա կապակցությամբ նախագծի հիմնավորման մեջ ներկայացված օրենսգրքի և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետի դրույթների միջև առկա առերևույթ հակասության վերաբերյալ հայտնում ենք, որ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն, եթե իրավական ակտում բառը նշված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաև այդ բառի հոգնակիի վրա և հակառակը, եթե տվյալ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ կամ ուղղակի այլ բան չի բխում այդ իրավական ակտի բովանդակությունից:

Բացի դրանից, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշման N 11 հավելվածի 12-րդ կետի համաձայն թեթև մարդատար և բեռնատար ավտոմոբիլներին ու ավտոբուսներին հատկացվում են թվերի ու տառերի միևնույն հավաքածուն պարունակող **2 (դիմացի և հետին)**, իսկ մոտոտրանսպորտային միջոցներին, տրիցիկլերին, քվադրոցիկլերին, կցորդներին ու կիսակցորդներին՝ **մեկ համարանիշ**: Այսինքն, սահմանվում է համարանիշերի տրամադրման երկու ռեժիմ՝ կախված տրանսպորտային միջոցի տեսակից: Հետևաբար, «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետով նախատեսված կարգավորումը ևս, տրանսպորտային միջոցի տեսակով պայմանավորված, պետք է դիտարկել տարբեր կերպ:

Այս մեկնաբանությունների համատեքստում օրենսգրքի 123.5-րդ հոդվածի և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետի միջև հակասություն չկա:

Տեղին է նշել, որ նախագծով առաջարկվող դրույթը խնդրահարույց է ճանապարհային երթևեկության անվտանգության ոլորտի մի շարք այլ իրավախախտումների (օրինակ՝ տեսանկարահանող սարքով արձանագրվող) տեսանկյունից: Չի բացառվում, որ անձը դիտավորյալ հանի, օրինակ, դիմացի համարանիշը և գերազանցի թույլատրելի արագությունը՝ օգտվելով այն հանգամանքից, որ համարանիշի բացակայության պայմաններում հնարավոր չի լինի նույնականացնել տրանսպորտային միջոցը և արձանագրել իրավախախտումը:

Հարկ է նշել նաև, որ քննարկման առարկա դրույթի վերաբերյալ նախագծի հիմնավորման մեջ ներկայացված մտավախությունն անհաղթահարելի հանգամանքների վերաբերյալ ևս սպառվում է գործող օրենսդրական կարգավորումների պայմաններում:

2. Նախագծի 2-րդ հոդվածով օրենսգրքի 124-րդ հոդվածում առաջարկվող տրանսպորտային միջոցի վարորդի կողմից՝

1) աղբ նետելու պատասխանատվության վերաբերյալ հայտնում ենք, որ թե՛ օրենսգիրքը, թե՛ վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծը սահմանում են վարչական պատասխանատվություն ոչ միայն տրանսպորտային միջոցի վարորդի, այլև ուղևորի կողմից տրանսպորտային միջոցից աղբ կամ այլ առարկաներ նետելու համար.

2) ձայնային ազդանշանի կիրառման կանոնները ժամանակային առումով տարբերակելը հիմնավորված չէ: Ձայնային ազդանշանների կիրառման կանոնները խախտելու անմիջական օբյեկտը ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ոլորտի հասարակական հարաբերություններն են, ինչն ուղղակիորեն բխում է նաև օրենսգրքի 124-րդ հոդվածի վերնագրից: Հետևաբար, գիշերային ժամերին ձայնային ազդանշանների կիրառման կանոնները խախտելու համար առավել խիստ պատասխանատվություն նախատեսելն անհրաժեշտ է ծանրակշիռ հիմնավորել հենց ճանապարհային երթևեկության անվտանգության տեսանկյունից: Նախագծի հիմնավորման մեջ նշված քաղաքացիների հանգիստը խախտելու վերաբերյալ դրույթներն ընդգրկված են օրենսգրքի հասարակական հարաբերությունների դեմ ուղղված իրավախախտումների այլ հոդվածներում: Մասնավորապես, օրենսգրքի 180-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում լռությունը խախտելու համար, որը ներառում է նաև գիշերային ժամանակ (ժամը 23.00-ից մինչև 7.00-ն) ձայնային ազդանշաններ տալը, որը կապված չէ անհետաձգելի անհրաժեշտության հետ: Ընդ որում, վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծով վերանայվել է օրենսգրքի նշված հոդվածով նախատեսված սանկցիան՝ նախազգուշացման փոխարեն նախատեսելով տուգանք, իսկ նույն

արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը դիտարկվել է որպես ծանրացնող հանգամանք՝ կրկնակի սանկցիայով։

Ամփոփելով նշվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված օրենքի նախագծով քննարկվող հոդվածներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է և առաջարկում է դրանք թողնել անփոփոխ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 2018 թվականի N 247 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՋԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի տեղակալ Վարդան Եղիազարյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-270-19.02.2018-ՊԱ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2018 թ. մարտի 14
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-270-19.02.2018-ՊԱ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 123-5 հոդվածի

ա) 2-րդ կետում «չփակցնելը» բառից հետո ավելացնել՝ «եթե դա պայմանավորված չէ տվյալ պահին անհաղթահարելի հանգամանքներով»:

բ) 4-րդ կետում «համարանիշ» բառը փոխարինել «համարանիշներ» բառով:

գ) 4-րդ կետից հետո ավելացնել 4ա կետը՝ «4.ա. Զույգ համարանիշների դեպքում առանց մեկ հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոց վարելը, եթե դա պայմանավորված չէ տվյալ պահին անհաղթահարելի հանգամանքներով, առաջացնում է տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով»:

դ) 13-րդ կետը շարադրել հետեւյալ կերպ. «Տրանսպորտային միջոցը համարվում է առանց համարանիշների, կամ առանց մեկ համարանիշի (զույգ համարանիշների դեպքում), եթե այդ համարանիշները (համարանիշը) ամրացված չեն (չէ) դրա համար նախատեսված տեղում եւ ընթերնելի չեն (չէ), ինչպես շարժման ընթացքում այնպես էլ կանգնած ժամանակ):»:

Հոդված 2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի
ա) 15-րդ կետից հանել «ինչպես նաեւ տրանսպորտային միջոցի վարորդի կողմից տրանսպորտային միջոցից իրեր եւ առարկաներ նետելը» բառերը:

բ) ավելացնել 15.1 կետը՝ «Վարորդի կողմից տրանսպորտային միջոցից իրեր, ծխախոտ եւ այլ առարկաներ նետելը ՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով»:

գ) 19-րդ կետում «կանոնները» բառից հետո ավելացնել «ժամը 7:00-23:00 միջակայքում»:

դ) 19-րդ կետի վերջից ավելացնել «նույն խախտումը ժամը 23:00-7:00 կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով»:

Հոդված 3. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին կետում «նախազգուշացում» բառի փոխարեն ավելացնել «տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով» բառերը:

Հոդված 4. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխությունների եւ լրացումների կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ

Վարչական իրավախախտումների վերաբերյա Հայաստանի հանրապետության օրենսգրքի 123-5 հոդվածի 2-րդ կետում նշված է, որ տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշը սահմանված տեղում չփակցնելը պարտադիր կերպով առաջացնում է տուգանքի նշանակում: Սակայն իրականում լինում են այնպիսի ֆորսմաժորային իրավիճակներ, երբ համարանիշը սահմանված տեղում փակցնելը տվյալ պահին անհնար է, անհաթհարելի հանգամանքներից ելնելով: Հետեւապես անհրաժեշտություն է ծագում այդպիսի դեպքերի պարագայում նախատեսել տուգանքից ազատման հնարավորություն:

Նույն հոդվածի 4-րդ կետում նշվում է, որ առանց հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցներ վարելը պարտադիր առաջացնում է տուգանքի նշանակում: Այդ հոդվածի ձեւակերպումը հակասության մեջ է մտնում «ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի հոդված 18-ի 1-ն մասի Ը) կետի դրույթների հետ, որը հիմք է հանդիսացել վարչական իրավախախտման համար տուգանքի նշանակման համար: Մասնավորապես ՃԵԱԱ մասին օրենքը արգելում է տրանսպորտային միջոցի երթեւեկությունը, եթե վարորդը տրանսպորտային միջոցը վարում է առանց հաշվռման համարանիշների, այսինքն, եթե բացակայում են բոլոր համարանիշները: Այս անհամապատասխանությունը վերացնելու համար ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 123-5 հոդվածի 4-րդ կետում «համարանիշ» բառը անհրաժեշտ է փոխարինել «համարանիշներ» բառով: Նշենք, որ այս փոփոխությունը ունի մեծ իմաստային նշանակություն, քանի որ եթե վարորդը իր տրանսպորտայից միջոցից հանել է բոլոր համարանիշները, ինչի մասին խոսվում է ՃԵԱԱ մասին օրենքում, ենթադրվում է, որ դա արված է հատուկ միտումով: Սակայն, եթե տրանսպորտային միջոցից զույգ համարանիշների դեպքում բացակայում է մեկը՝ ապա դա կարող է լինել վթարի, կամ պատահարի հետեւանք եւ վարորդի կողմից միտում չպարունակի: Բացի այդ, մեկ համարանիշի բացակայությունը կարող է լինել անհաղթահարելի հանգամանքների հետեւանք:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրապետության ճանապարհներին, բնակավայրերի փողոցներում տրանսպորտային միջոցներից թափվում է մեծ քանակությամբ աղբ , որի դեմ կառավարությունը սկսել է լայնածավալ պայքար անհրաժեշտություն է ծագում ավելացնել տրասնպորտային միջոցից իրեր եւ առարկաներ նետելու համար նախատեսված տուգանքի չափը, օրենքում հատուկ նշելով ծխախոտը նետելու հանգամանքը: Բացի այդ ՃԵԱԱ մասին օրենքի հոդված 23-ում արգելվում է «աղտոտել ճանապարհի ծածկույթը» եւ սույն ձեւակերպումը նույնպես անհրաժեշտ է ներմուծել ՎԻՎ օրենսգրքում:

Հաշվի առնելով այն, որ բնակավայրերում զանգվածային կերպով խախտվում է ՃԵԿ-ի հոդված 136-ի ձայնային ազդաննշանների վերաբերյալ պահանջները, հատկապես գիշերային ժամերին, խախտելով քաղաքացիերի հանգիստը, անհրաժեշտություն է առաջացել գիշերային ժամերին ձայնային անտեղի ազդանշանների կիրառման համար կրկնապատկել սահմանված տուգանքի չափով:
Առաջարկվող փոփոխությունները կհանգեցնեն վարորդների հանդեպ ավելի արդարացի վերաբերմունքի, միարժամանակ կնպաստեն ճանապարհների եւ փողոցների մաքրության պահպանմանը, ինչպես նաեւ քաղաքացիների գիշերային հանգստի ապահովմանը: